ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

31 օգոստոսի 2021թ. ք. Իջևան

Նախագահ՝ Վ.Ա. Աղաբաբյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի և 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: /Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան/
2. Ֆակուլտետի 2021-22 ուստարվա նախապատրաստական աշխատանքների քննարկում: /Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան/
3. Ֆակուլտետի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրման և հաստատման մասին: /Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան/
4. Արտակարգ դրության պայմաններում ֆակուլտետում նախատեսվող լսարանային և հեռավար կազմակերպվելիք դասընթացների քննարկում: /Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան/
5. Առաջին լուծարքային քննաշրջանի անցկացման մասին:/Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան/

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ.Ա. Աղաբաբյան:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ .

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի 2021-22 ուստարվա աշխատանքային պլանը և նշեց, որ վերջինս ընդգրկում է ֆակուլտետում իրականացվող

գործընթացները: Ճիշտ է, մասնաճյուղը դեռևս չի հաստատել 2021-2025 թթ. ռազմավարական պլանը, սակայն մշակվածը հնարավորինս ընդգրկում է բակալավրի ուսումնական պրոցեսների բոլոր գործընթացները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյանը, Հ. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետի 2021-22 ուստարվա աշխատանքային պլանը ներկայացնելու տնօրենության հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ .

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը և «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչ Հ. Ասատրյանը: Զեկուցողները ներկայացրեցին 2021-2022 ուստարվա ամբիոնային և անհատական բեռնվածությունները: Նշվեց, որ ամբողջովին լուծված է դասախոսների և ժամաբաշխման հարցը: Ուսումնական պրակտիկաները ևս բաշխված են, իսկ արտադրական պրակտիկայի ժամաքանակի բաշխմանը կանդրադառնան հաջորդ նիստերի ընթացքում:

Զեկուցողները նշեցին, որ դասախոսները պետք է սեղմ ժամկետում ամբիոն ներկայացնեն առարկայական փաթեթները: Զեկուցողները նաև նշեցին, որ ֆակուլտետում ունենն նոր դասախոսներ՝ Կ. Ղարախանյան, Ի. Դուդուկչյան, Կ. Գոգինյան և Լ. Բայրամյան, որոնց հետ պետք է լրացուցիչ աշխատանքներ իրականացվեն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ան. Չիբուխչյանը, Ք. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ .

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը:

Զեկուցողը նշեց, որ Ս. Սարգսյանի անվան կրթաթոշակի առաջադրման համար ֆակուլտետում կան երեք հավակնորդներ՝ Անի Դավթյան, Մետաքսե Մելյան և Անի Հարությունյան: Քանի որ Անի Դավթյանը և Մետաքսե Մելյանը նախորդ կիսամյակներում ստացել են վերը նշված կրթաթոշակը, ուստի այս տարի կառաջադրվի Անի Հարությունյանի թեկնածությունը:

Զեկուցողը առանձնացրեց «Դիզայն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Մետաքսե Մելյանին: Վերջինս վեց կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն: Զեկուցողն առաջարկեց Մետաքսե Մելյանին ներկայացնել որպես «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Զեկուցողը առանձնացրեց նաև «Դիզայն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Մանե Սարհատյանին: Վերջինս երեք կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն: Զեկուցողն առաջարկեց Մանե Սարհատյանին ներկայացնել որպես «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Զեկուցողը առանձնացրեց նաև «Դիզայն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Խորեն Շահնազարյանին: Վերջինս երկու կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն: Զեկուցողն առաջարկեց Խորեն Շահնազարյանին ներկայացնել որպես «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ .

Մասնակիցները միաձայն ողջունեցին ընտրված թեկնածությունները, քանի որ վերջիններս ամբողջ տարվա ընթացքում ցուցաբերել են գերացանց առաջադիմություն:

ՈՐՈՇԵՑԻՆ .

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու Մետաքսե Մելյանին որպես «ԵՊՀ», Անի Հարությունյանին՝ «Սպարտակ Սարգսյան», Խորեն Շահնազարյանին՝ «Վազգեն Սարգսյան», Մանե Սարհատյանին՝ «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի թեկնածուներ:

ԼՍԵՑԻՆ .

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Նա հայտնեց, որ նոր ուսումնական տարվա դասերը լինելու են առկա՝ լսարանային: Բացառություն է կազմում «Դիզայն պատմությունը» (դասախոս՝ Ինգա Դուդուկչյան), որը կիրականացվի լսարանում՝ առցանց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.Հ. Ասատրյանը, Հ. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Կիրառական արվեստի ֆակուլտետում նախատեսվողլսարանային և հեռավար կազմակերպվելիք դասընթացների կազմակերպման գործընթացը համարել բավարար

ԼՍԵՑԻՆ .

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց 2021-22 ուստարվա առաջին կիսամյակի լուծարքային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Նա նշեց, որ լուծարքների հանձնումը նախատեսված է օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 20-ը: Նշվեց, որ պատրաստ են առաջին լուծարքային շրջանի անհատական գրաֆիկները և հանձնարարեց ամբիոնի վարիչներին՝ առանձնահատուկ ուշադրության դարձնել պարտքերի վերահանձնման գործընթացներին: Անկախ պարտք ունեցող ուսանողների թվի՝ լուծարքները պետք է անցկացվեն հանձնաժողովի ներկայությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Լուծարքային շրջանի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման գործընթացը գնահատել բավարար։

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք.ՄԽԻԹԱՐՅԱՆ